ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«ԷՔՍՏՐԱ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ն ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/25 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
2	-	-	-	-	Ուլտրաձայնային զոդման համակարգը կոմպակտ, տեղափոխելի և տարածք խնայող բարձր ճշգրտության համալիր է, որը նախատեսված է ապակու, կերամիկայի և զոդմանը դժվար ենթարկվող մետաղների ուղղակի՝ ֆլյուքս չօգտագործող զոդման համար. օքսիդների հեռացումը իրականացվում է ուլտրաձայնային կավիտացիայի միջոցով՝ առանց քիմիական ֆլյուքսի, ինչի շնորհիվ ստացվում են կրկնելի և բարձր որակի միացումներ: Համակարգը բաղկացած է ուլտրաձայնային

						գեներատորից (Ultrasonic Oscillator Device) և զոդման երկաթից (паяльник): Գեներատորը ապահովում է կայուն ուլտրաձայնային հաճախականություն՝ հաստատուն ամպլիտուդի պահպանմամբ և զարգացած հետադարձ կապով՝ ռեզոնանսային հաճախականության ավտոմատ ճշգրտման համար. աշխատանքային հաճախականությունը՝ ավտոկառավարվող 60 կՀց ±5 կՀց, անվանական ուլտրաձայնային հզորությունը՝ 15 Վտ (առավելագույն), արդյունավետ ելքը՝ մինչև 10–12 Վտ՝ 1–12 Վտ միջակայքում քայլային կարգավորմամբ, իսկ ջեռուցիչի ջերմաստիճանը կարգավորվում է 200 °C-ից մինչև 500 °C՝ 10 °C քայլով (կա նաև OFF ռեժիմ). թվային ցուցիչը իրական ժամանակում ցուցադրում է ուլտրաձայնային հաճախականությունը, ուլտրաձայնային հզորությունը, ամպլիտուդը և ջեռուցիչի ջերմաստիճանը՝ թույլ տալով զոդման պայմանները ճշգրիտ

						վերարտադրել։ Սնուցումը՝ 220–240 Վ, 50 Հց, 200±2% Վտ սպառմամբ, պաշտպանությունը իրականացված է երկու ապահովիչների պահիչներով՝ normal-blow 250 Վ / 1,5 Ա ապահովիչներով (220–240 Վ համար)։ Գեներատորի կորպուսի վրա նախատեսված են՝ մոնիտոր (հաճախականության, հզորության, ջերմաստիճանի, ամպլիտուդի ինդիկացիա), Monitor A, Monitor B, Calibration, Check (ուլտրաձայնի մեկնարկ) անջատիչներ, Power և Heater կարգավորիչներ, ոտնակների, զոդման երկաթի և երկրորդային ոտնակի միակցիչներ, անկյան կարգավորման բռնակ, MAIN գլխավոր անջատիչ, AC240V ընտրիչ, երկու ապահովիչների պահիչ, AC inlet սնուցման մուտք, օպցիոնալ LAN մուտք, ինչպես նաև մոնիտորինգի միակցիչ (արտաքին կառավարում և հզորության/ջերմաստիճանի վերահսկում)։ Գեներատորի չափերն են 210 մմ ±2% (լայնք) × 90±2% մմ (բարձրք) × 235±2% մմ (խորք)՝ առանց բռնակի և ռետինե հենակների, զանգվածը՝ 5±2% կգ,

					շահագործման պայմանները՝ 0–40 °C և ≤90 % հարաբերական խոնավություն՝ առանց խտացման։ Զոդման երկաթը կառուցված է Լանժևենի տիպի PZT պիեզոտրանսդյուսերի հիման վրա (60 կՀց), բնական օդային սառեցմամբ, և ներառում է չժանգոտվող պողպատից ծայր (Φ1,0–Φ4,0 մմ՝ 0,5 մմ քայլով, ստանդարտ՝ Φ4,0 մմ), ջեռուցիչ/սենսոր հանգույց (65 Վտ բարձրարդյունավետ պատյանային ջեռուցիչ՝ ինտեգրված K տիպի թերմազույգով), կորպուս (կոդով պաշտպանված), միակցիչ (ջեռուցիչի/ջերմաստիճանային սենսորի ինտերֆեյս), հնչափող՝ մեխանիկական տատանումների ուժեղացուցիչ, ջեռուցիչի մալուխ (միակցիչով) և օսցիլյատորային մասը. կորպուսի առավելագույն տրամագիծը Ø36 մմ է, ընդհանուր երկարությունը՝ 250±2% մմ (առանց մալուխի), իսկ զանգվածը՝ 210±5% գ։ Երաշխիքային ժամկետ 1 տարի։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО ЭКСТРА МОТОРС в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԲԿԳԿ-ԷԱՃԱՊԶԲ-26/25 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
2					